

## ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԸՆԴՀԱՏԱԿԻ ԼԵԳԵՆԴԸ

Մի ուշագրավ վավերագիր Ավետիս Ղարիբյանի (Պաղվալի Վաղո) հեղափոխական գործունեության մասին\*

**Բանալի բառեր** – Պաղվալի Վաղո, ընդհատակ, Ալեքսանդրապոլ, Ոստիկանության դեպարտամենտ, Արդարադատության նախարարություն, մարտական հրացանի մասեր, փամփուշոներ, պարկուճներ, խուզարկություն, պարկ, հետաքննություն:

Դեռևս հեռավոր 1988 թվականին, Մոսկվայում, ԽՍՀՄ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվում (այժմ՝ Ռուսաստանի Դաշնության պետական արխիվ) ՀՅ Դաշնակցության պատմությանը նվիրված բազմաթիվ վավերագրերի շարքում մենք հայտնաբերեցինք բավականին գեղեցիկ և վարժ ձեռագրով գրված մի խորհրդապահական «Ջեկույց», որում բարեխղճորեն շարադրված էին Ալեքսանդրապոլ (Գյումրի) քաղաքի բնակիչ Ավետիս Ղարիբյանի հանդեպ 1891–1892 թթ. ցարական Ոստիկանության դեպարտամենտի և Արդարադատության նախարարության ձեռնարկած դատաքննության փորձի մանրամասները:

Նեղ՝ պատմաձանաչողական առումով, իր հայտնաբերման պահին փաստաթուղթն առանձնակի հետաքրքրություն չէր ներկայացնում, որովհետև դեպի Արևմտյան Հայաստան գենքի ու գինամթերքի փոխադրման մեջ մեղադրվող անձի «մեղքը» այդպես էլ հնարավոր չէր եղել ապացուցել: Բայց քանի որ Ղարաբաղյան շարժման շնչով տոգորված 1988-ին մեզ քաջ հայտնի էր Ավետիս Ղարիբյան–Պաղվալի Վաղոյի (1866–1904) ո՛վ լինելու հանգամանքը, դաշնակցական ընդհատակի այդ առասպելական դեմքի հանդեպ մեր համակրանքը, Երևան վերադառնալուց առաջ, ստիպեց դատարկել սեփական գրպանի վերջին պարունակությունը՝ փաստաթղթի ֆոտոպատձենը պատվիրելու և ստանալու համար:

Եվ այսօր՝ անցած տարիների ընթացքում ձեռք բերած տեսական գիտելիքների բարձրությունից, վերընթերցելով գրեթե 3 տասնամյակ մեր անձնական արխիվում պահված վավերագիրը, համոզվում ենք, որ Ավետիս Ղարիբյանի հանդեպ 1891–1892 թթ. ձեռնարկված առաջին հետաքննության

\*Ընդունվել է տպագրության 30.08.2015:

Докладъ  
по фому жития сор. Александровнаше Авестина Таридова /, аны-ме Таридовкы /, адва-  
нашого вь государственныхъ преступлений.

Вь начале Феврала 1891 года, вь с. Алек-  
сандраполь, грекъ Александръ Авраимовъ  
заявилъ министру Императорскаго Управле-  
ния Тароуцено, что житиемъ того-же города  
Авестинъ Таридовъ занимается фактически  
оружия армянскомъ, импортирующимъ вь  
Турцию для даровъ сь курдами, а деньги на  
покупку оружия, какъ подозреваетъ онъ,  
Авраимовъ, фактъ агента общества «Надежда  
Векосетяновъ». Кроме того Авраимовъ сооб-  
щаетъ, что графъ однажды лично навилъ  
Таридова, аны слышалъ, какъ поименно, держа  
вь рукахъ какую-то записку, говорилъ неус-  
тоянному армянину, зачемъ онъ не едетъ  
по назначению черезъ французей, на что армя-  
нинъ ответилъ, что потерялъ ивъ при пере-  
возе вь горахъ. Тароуцено предложилъ  
Авраимову заявить адъ агента Тамозянну

отъ 1891  
1891

արդյունքներն անփոփող «Ջեկույցը» հայ ազատամարտի առօրեականության անկրկնելի դրվագներից մեկն է: Այն արժեքավոր է ոչ թե դասական պատմագիտությանը բնորոշ՝ **ընդհանուր օրինաչափությունների** բացահայտման, այլ պատմության մեծ ու փոքր գիտակաների համար մինչ օրս անտեսանելի մնացած՝ առօրեական իրադարձությունների **եզակի ու անկրկնելի** էջերը ներկայացնելու համար:

Հեղափոխական ժամանակագրի վաղուց հեռացած մեր իրականության մեջ ցարական պատժիչ մեքենայի ձիրաններից դուրս պրծնելու համար Պաղվալի Վաղոյի՝ իր ընկերների հետ միասին ձեռնարկած հնարամիտ քայլերի մասին վկայող այս վավերագիրը ոմանց կարող է արկածային կինոֆիլմի սյուժե հիշեցնել: Մինչդեռ դա էր հեղափոխական պայքարի իրական առօրեականությունը, որտեղ միմյանց էին բախվում մի կողմից՝ ցարական վարչամեքենան՝ իր բազմաթիվ ժանդարմներով ու նրանց գաղտնի ամբաստանություններ (դոնոսներ) ներկայացնող մատնիչներով, իսկ մյուս կողմից՝ 1890-ականներին ՀՅԴ Անդրկովկասի կառույցներից ամենաամուրն ու կենսունակը՝ Գյումրիի (Քարի) կազմակերպությունը<sup>1</sup>: Ուստի լիովին հիմնագուրկ է հեղափոխական պայքարի առօրեականությունը և պատմության բեկունային պահերին հանդես եկած պատմակերտ հերոսների մեծ գործերը միմյանցից տարանջատելու միտումը, քանզի Պաղվալի Վաղոյի նման նվիրյալների կյանքը ամենօրյա հերոսացում էր:

Ժամանակին առօրեականության գիտական ընկալման մասին պատկերացում անգամ չունեցող դաշնակցական հեղինակները **խոնարհ հերոսների** վերաբերյալ իրենց հրապարակումներով մեծ աշխատանք են կատարել հայ ազգային-ազատագրական պայքարի հետնաբեմում ամենօրյա վտանգներով լի այդ իրական հերոսացումի առարկայական պատկերը ներկայացնելու համար: Անշուշտ, հեղափոխական ընդհատակում գործելու հրամայականները ստիպել են Պաղվալի Վաղոյին ու նրա նմաններին՝ քաջության հետ միասին դրսևորել նաև հնարամտություն, դիմել հակառակորդին ապակողմնորոշող քայլերի, իսկ հաճախ էլ պարզապես խաբել ցարական ժանդարմներին և զբաղվել փայլուն դերասանությամբ, բայց այդ ամենն ամեննին էլ չի նսեմացրել նրանց դրսևորած անմնացորդ նվիրումն ու ինքնագոհությունը: Հենց այդպիսի մի դրվագ է արձանագրված ներկայացվող փաստաթղթում:

Եվ այսպես՝ 1891 թվականի փետրվարի սկզբներին իր հարևանի՝ հույն Ալեքսանդր Աբրամովի մատնության և սեփական կրպակում<sup>2</sup> կատարված խուզարկության արդյունքում Ավետիս Ղարիբյանը կանգնել էր իրեղեն ապացույցներով (մարտական զենքի մասեր ու փամփուշտներ) հաստատված անհերքելի ամբաստանությունների առջև: Դրանց առկայության պայ-

1 Ավելի մանրամասն տես մեր «ՀՅ Դաշնակցության գործունեությունն Ալեքսանդրապոլում 1890-1895 թվականներին» հոդվածը, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2003, N 2, էջ 143-148:

2 Ներկայացվող փաստաթղթում գործածվող ռուսերեն «лавка» (լավկա) բառը թարգմանել ենք «կրպակ» հասկացությամբ, որն այդ լեզվում ունի իմաստային-գործառնական լայն ընդգրկում: Քանզի Ավետիս Ղարիբյանի նշանավոր «պաղվալը» եղել է մի քանի բաժին ունեցող իջևանատան մի մասը: Այսպես՝ 1890 թ. ամռանը Ալեքսանդրապոլ մեկնած և այստեղ ՀՅԴ առաջին խումբը ձևավորած Մարտին Շաթիրյանը վկայում է. «...Այս Ղարիբյանը մի խան ունէր, ուր իջևանում էին չարվադարները»: Տես Մ.Շ.-ի յուշերը, Հայոց հասարակական շարժումների պատմությունից, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1923, N 5, էջ 37:

մաններում թվում էր, թե նա պատժից խուսափելու որևէ հնարավորություն չունի: Սակայն գյումրեցուն բնորոշ հնարամտությամբ՝ Պաղվալի Վաղոյի ձեռնարկած պատասխան քայլերը, որոնք ուղղակի ապշեցնում են իրենց ներքին տրամաբանությամբ ու հետևողականությամբ, շրջեցին դատաքնության ընթացքը՝ ամբաստանյալին վերածելով գրապարտության գոհի, իսկ ամբաստանողին՝ կեղծ մատնություն կատարած հանցագործի: Այդ նպատակով Վաղոյի կողմից գործի դրված հնարքները՝ վկաների ցուցմունքները մատնիչի դեմ ուղղելը, հայտնաբերված առարկայական ապացույցները վերջինիս կատարած խարդավանքների արդյունք ներկայացնելը, և վերջապես՝ իրենից առգրավված գրությունների հեղինակներին հայտնաբերելն ու նրանց ցուցմունքները հակառակ նպատակներով օգտագործելը վկայում են, որ դաշնակցական ընդհատակի այդ առասպելական դեմքի թիկունքին գործել է ոչ միայն ՀՅԴ Ալեքսանդրապոլի (Քարի) կազմակերպությունը, այլև իր համաքաղաքացուն դատական հետապնդումից ազատելու համար ամեն ինչի պատրաստ գյումրեցու պատվախնդրությունը:

Եվ ահա՝ մեկ տարուց ավելի տևած հետաքննությունից հետո ցարական Արդարադատության նախարարության երկրորդ դեպարտամենտը 1892 թ. մայիսի 22-ին Ոստիկանության դեպարտամենտի ղեկավար, գեներալ-լեյտենանտ Շեբեկոյին է ուղարկում Ավ. Ղարիբյանի հասցեին ուղղված ամբաստանությունների ողջ փաթեթը, որի մեջ մտնում էին հետաքննության թղթածրարը, Կովկասի քաղաքացիական մասի կառավարչի թիւ 131 հաղորդումը և Թիֆլիսի Դատաստանական պալատի դատախազի թիւ 199 գրությունը<sup>3</sup>: Ոստիկանության դեպարտամենտի ղեկավարը, որն իրականում ինքն էր որոշում ամբաստանյալների պատժի հարցը, իսկ Արդարադատության նախարարությունը սուկ կատարում էր իրավական շղարշի գործառույթը, իր 1892 թ. սեպտեմբերի 7-ի պատասխան գրությամբ հայտնում էր. «Պատիվ ունեմ տեղեկացնելու Ձերդ Գերագանցությանը, որ ես հնարավոր եմ համարում դադարեցնել ներկա գործի հետագա ընթացքը»<sup>4</sup>: Ընդհատում օրը գեներալ-լեյտենանտ Շեբեկոյի գլխավորած հաստատությունը նույնբովանդակ մի գրություն (թիւ 1707) ուղարկեց նաև Երևանի Նահանգային ժանդարմական վարչությանը: Այստեղ նշվում էր. «Ոստիկանության Դեպարտամենտը պատիվ ունի տեղեկացնելու Էրիվանի Նահանգային ժանդարմական վարչության Պ. Պետին առ ի գիտություն, որ իրեն վստահված հաստատությունում Ալեքսանդրապոլ քաղաքի բնակիչ Ավետիս Ղարիբովին (նույն ինքը՝ Ղարիբյանց) պետական հանցագործության մեջ մեղադրելու հարցով իրականացված հետաքննությունը Պ.պ. Ներքին գործերի և Արդարադատության նախարարների համաձայնությամբ հետագա քննության համար դադարեցված է՝ չեղարկելով ամբաստանյալի հանդեպ կիրառվող հետապնդման միջոցը»<sup>5</sup>:

Այսպիսով՝ 1892 թ. սեպտեմբերի 5-ին Արդարադատության նախարարության կազմած «Ջեկույցը», որը հրապարակում ենք մեր հանդեսի ներկա համարում, անցել էր ցարական Ռուսաստանի պատժիչ մեքենայի բոլոր

3 Տե՛ս ԳԱՔՓ, Ժ.Պ., փ. 102, 1892 թ., օր. 188, ճ. 60, Կ. 2, լ. 1.

4 Տե՛ս նույն տեղում, թ. 7:

5 Նույն տեղում:

հիմնական օղակներով: Ուրեմն՝ այնքան ամուր ու փաստարկված էին Ավետիս Ղարիբյանի ու նրա ընկերների ձեռք բերած պատասխան ապացույցներն ու հակափաստարկները, որ ցարական վարչամեքենան ստիպված էր դադարեցնել հետաքննությունը:

Համարձակ ու հնարամիտ Պաղվալի Վաղոն, իր ընկերների հետ միասին, 1891–1892 թվականների ընթացքում փաստորեն կարողացավ խափանել մի ողջ կայսրության ոստիկանական ու դատական մարմինների ձեռնարկած հետաքննությունը և դեռ երկար տարիներ շարունակել իր ընդհատակյա գործունեությունը: Նրա մասին մեր ձեռքի տակ եղած ոչ մեծ «Զեկույցի» հրապարակումը, որը պահվում է Ռուսաստանի Պետական արխիվի 102–րդ ֆոնդում (7–րդ գործավարություն, թիվ 60–րդ գործ), հարգանքի տուրք է այդ իրադարձություններից շատ տարիներ անց՝ 20–րդ դարի սկզբներին ՀՅԴ կազմակերպած հերոսական անցումներից մեկին մասնակցած և 1904 թ. ամռանը Թորգոմի (Թուման Թումյան) հետ միասին նահատակված **Ավետիս Ղարիբյանի** հիշատակին:

Գևորգ Ս. Խուդինյան  
*Պատմ. գիտ. դոկտոր*

### **ԶԵԿՈՒՅՑ**

#### **Պետական հանցագործության մեջ մեղադրվող քաղ. Ալեքսանդրապոլի բնակիչ Ավետիս Ղարիբովի (նույն ինքը՝ Ղարիբյանց) գործով**

1891 թվականի փետրվարի սկզբին Ալեքսանդրապոլ քաղաքում հույն Ալեքսանդր Աբրամովը հայտարարություն է տվել ժանդարմական վարչության վախճանատու<sup>6</sup> Գերաշենկոյին առ այն, որ նույն քաղաքի բնակիչ Ավետիս Ղարիբովը զբաղվում է քրդերի դեմ պայքարի համար Թուրքիա մեկնող հայերին գենք հայթայթելով, իսկ գենքի գնման համար փողերը, ինչպես կասկածում է նա՝ Աբրամովը, տալիս է «Նադեժդա» ընկերության գործակալ Վեկապետովը<sup>7</sup>: Բացի դրանից, Աբրամովը հայտնել է, որ մի անգամ անցնելով Ղարիբովի կրպակի մոտով, նա լսել է, թե ինչպես վերջինս ձեռքում ունենալով ինչ–որ գրություն, մի անհայտ հայի ասել է, թե ինչո՞ւ չի հանձնել երեք հրացանները՝ ըստ նշանակման, ինչին հայը պատասխանել է, որ դրանք կորցրել է քաղաք տեղափոխելու ընթացքում:

Գերաշենկոն առաջարկեց Աբրամովին այդ մասին հայտնել Էրիվանի Նահանգային ժանդարմական վարչության պետի օգնական ռոտմիստր<sup>8</sup> Կոնովցեկին<sup>9</sup>: Աբրամովը սկզբում չհամաձայնեց, բայց մեկ շաբաթ հետո ներկայացավ ռոտմիստր Կոնովցեկին և կրկնեց վախճանատու Գերաշենկոյին տրված հայտարարությունը, հավելելով, որ Ղարիբովը հրացանի 60 փողեր է գնել Ալեքսանդրապոլում կրպակ ունեցող և երկաթի ջարդոնի վաճառքով զբաղվող Ալեքսեյից: Մարտի սկզբին Աբրամովը նորից է ներկայացել Գերաշենկոյին և հայտարարել, որ սպիտակ ձիու վրա դրված բեռնապարկով Ղարիբովի Կրպակ<sup>10</sup> են բերվել գենքով բեռնված երկու

6 Հեծյալ վերակա:

7 Հենց այս ընկերության միջոցով էր ՀՅ Դաշնակցությունը Ռուսաստանի Տուլա քաղաքից և այլ վայրերից կազմակերպում մարտական գենքի մասերի և փամփուշտների առաքումն Անդրկովկաս:

8 Ավագ սպայական կոչում հեծելագործում:

9 Ռոտմիստր Կոնովցեկը՝ որպես Նահանգային ժանդարմական վարչության պետի օգնական, տնօրինում էր այդ հաստատության գործերը Երևանի նահանգի մեջ մտնող Ալեքսանդրապոլում:

10 Պաղվալի Վաղոնի համեստ կրպակի անվանումն այստեղ մեծատառով է գրված՝ թերևս դրա

հակեր և թաքցվել կրպակի մոտ կանգնած քամհարող մեքենայի մոտ: Այդ առիթով Աբրամովը հարցրել է Գերաշչենկոյին՝ արդյո՞ք Ղարիբովը բանտ է տեղափոխվելու, եթե նրա մոտ «ինչ-որ բան գտնեն»: Վերահսկողություն հաստատելով Ղարիբովի կրպակի հանդեպ, Գերաշչենկոն այդ մասին հայտնել է ռոտմիստր Կոնովցևին, ով երեկոյան կրպակի մոտ ժանդարմներից բաղկացած պահակակետ է տեղակայել, իսկ մյուս օրվա՝ մարտի 6-ի առավոտյան իրականացրել է խուզարկություն: Այդ խուզարկությամբ պահեստում, հատակի վրա՝ պատուհանի մոտ, այնտեղ կանգնած քամհարող մեքենայի հետևում գտնվել է պարկ, որում հայտնաբերվել են հեծելագորային Բերդանա հրացանի փամփուշտներ 229 հատ և թուրքական Մնեյդերի հրացանի [փամփուշտներ] 128 հատ: Բոլոր փամփուշտները գործարանային արտադրության և օգտագործման համար պիտանի էին: Նույն պարկում առկա էր անհասցե ծրար անհայտ անձից՝ հայերեն երկու նամակներով, որոնցում հայտնվում էր Ղարիբովից հրացաններ, ատրձանակներ և փամփուշտներ ստանալու մասին և նոր խմբաքանակների առաքման խնդրանք էր ներկայացվում: Առանձին հայտնաբերվել է արկղ՝ երկու փամփուշտներով և երեք պարկուճներով<sup>11</sup>, իսկ վաճառատեղանի արկղում՝ անունների երկու ցանկ՝ հայերեն լեզվով: Խուզարկության արձանագրությամբ կցված է ռոտմիստր Կոնովցևի կողմից ստորագրված տեղեկանք հետևյալ բովանդակությամբ. փամփուշտներով պարկը գտնվել է կրպակում՝ ապակիներ չունեցող պատուհանի տակ, և նման պատուհանի միջով պարկը կարող էր նետվել փողոցից, ինչը հավաստվել է [նախորդ] փորձով: Պատժական Օրենսգրքի 320-րդ հոդվածով որպես հանցագործության մեջ մեղադրվող ներգրավված Ավետիս Ղարիբովը, 26 տարեկան, իրեն մեղավոր չճանաչեց և բացատրեց, որ ինքը հայերի շարժման մեջ ոչ մի մասնակցություն չունի և այդ շարժման նպատակի մասին ոչինչ չգիտի: Ո՛չ հրացաններ, ո՛չ փամփուշտներ ոչ ոքից չի ստացել և ոչ ոքի չի վաճառել: Իր կրպակում հայտնաբերված պարկը իրեն չի պատկանում և մեկն ու մեկի կողմից նետվել է այնտեղ: Ամբաստանյալի՝ հետաքննությունից ու դատից խուսափելը կանխելու համար նրանից վերցվել է ստորագրություն բնակության վայրից չբացակայելու մասին:

Նույն մարտի 6-ին երկրորդ անգամ հարցաքննվել է Աբրամովը, բայց նա ոչ միայն չի հաստատել իր առաջին ցուցմունքը, այլև հայտարարել է, որ ինքը երբեք չի ներկայացել Ռոտմիստր Կոնովցևին և նրան Ղարիբովի մասին ոչինչ չի ասել<sup>12</sup>:

Մարտի 14-ին ամբաստանյալ Ղարիբովը գրավոր հայտարարություն է տվել, որում պնդել է, թե փամփուշտներով պարկն իր կրպակ է նետվել Աբրամովի կողմից, վկայակոչել է վկաներ Հարությունյանի, Նաբալդյանցի<sup>13</sup> ու Թանյանցի վրա և խնդրել է հետաքննություն սկսել Աբրամովի դեմ կեղծ մատնության համար:

Ամբաստանյալի մատնանշած վկաները ցուցմունք են տվել. Հարությունյանն այն մասին, որ Ղարիբովի մոտ տեղի ունեցած խուզարկության նախորդ երեկոյան նա՝ վկան, կրպակի մոտ տեսել է վերոհիշյալ Աբրամովին, Նաբալդյանցը – որ այդ մասին նրան հայտնել է նախորդ վկան, Թանյանցը – որ նույն երեկոյան Աբրամովն անցնում էր Ղարիբովի կրպակի մոտ գտնվող իր՝ վկայի կրպակի կողքով:

Կրպակի խուզարկության արձանագրությամբ հաստատվել է, որ փամփուշտներով պարկը կարող էր պատուհանով հեշտությամբ նետվել կրպակի մեջ:

Ղարիբովի կրպակում գտնված անունների ցուցակի դիտարկման ժամանակ պարզվել է, որ ցուցակի վերնագրում նշված է. «1888 թվական 16 ապրիլի, մատաղի համար հավաքված փողեր (գատկի գառ)»: Այնուհետև գալիս են հանգանակածների անունները, որոնք հանգանակել են 10 կոպ. մինչև 2 ռուբ., ընդամենը՝ 43 ռուբ. 16 կոպ.: Այնուհետև նշված է ծախսը. կառքերի համար 20 կոպ., հաց՝ 1 ռուբ. 10 կոպ.,

կարևորությունն ընդգծելու համար:

11 Կրակված փամփուշտ:

12 Երևում է՝ Պաղվալի Վաղոն կամ նրա ընկերները մինչ այդ հասցրել էին «խոսակցություն ունենալ» հույն մատնիչի հետ:

13 Թերևս՝ Նալբանդյանց:

փայտ 2 ռուբ., ցուլ 38 ռուբ. և այլն: Ղարիբովի խուզարկությանը ներկան բացատրեց, որ հայերը Սբ. Զատկի առիթով սովորություն ունեն փող հավաքել, որով ցուլ են գնում, խորովում են այն և հացի հետ միասին բաժանում աղքատներին: 1888 թվականին փողերը հավաքել է իր եղբայրը:

Վկաներ Մկրտիչ Կիլիպաթյանցը, Մադաթ Զանտիկյանցը և Արշակ Չարչոլիևը պնդում են, որ Ղարիբովն ու Աբրահամովը թշնամանքի մեջ են այն պատճառով, որ առաջինը խլում է երկրորդի գնորդներին: Չարչոլիևն ավելացրել է, որ մի անգամ Աբրահամովն իր ներկայությամբ սպառնացել է կամ սպանել Ղարիբովին, կամ էլ այնպես անել, որ նրան արտորեն:

Ալեքսանդր Հովհաննեսի Տեր-Ակոպովը, ում խոսակցական լեզվով նաև Ալեքսեյ են անվանում, ցուցմունք տվեց, որ ինքն իսկապես զբաղվում է երկաթի ջարդոնի առևտրով, բայց հրացանի ամբողջական փողեր իր մոտ նույնիսկ չկան, այլ առկա են միայն կտորներ, որոնք ինքը փթերով է վաճառում, բայց դրանք էլ Ղարիբովին երբեք չի վաճառել:

1892 թ. փետրվարի 19-ին Ղարիբովը Ռոտմիստր Կոնովցևին է ներկայացրել քաղաքային ուսումնարանի նախկին աշակերտ Չուխարյանցի տետրը, ով խոստովանել է իրեն՝ Ղարիբովին, որ փամփուշտների հետ գտնված նամակները գրվել են իր կողմից. նամակներն ինքը գրել է Աբրահամովի պարտադրանքով: Որպես վկա հարցաքննված Սարիբեկ Չուխարյանցը, հաստատելով Ղարիբովի հայտարարությունը, բացատրեց, որ ինչ-որ մի երեկո Ալեքսանդր Աբրահամովը հրավիրեց իր մոտ և խնդրեց գրել երկու նամակ՝ իր թելադրանքով, և որը նա՝ վկան, կատարեց, բայց ստորագրությունը և ամսվա նշումը իր կողմից չեն գրված: Ղարիբովի կողմից ներկայացված տետրակը նույնպես գրված է իր՝ վկայի կողմից:

Համեմատելով ձեռագիրը, որով գրված են անանուն նամակները և Ղարիբովի կողմից ներկայացված «Սարիբեկ Չուխարյանցի տետրակ հայկական և ռուսական երգերի համար» հայերեն գրությամբ տետրակը, փորձագետը եկավ այն եզրակացության, որ երկու նամակներն էլ շարադրված են միևնույն ձեռագրով, որով գրվել են բանաստեղծությունները, ինչից կարելի է բավարար ճշգրտությամբ ենթադրել, որ նամակներն ու բանաստեղծությունները գրվել են, ամենայն հավանականությամբ, նույն անձի կողմից:

Վերը շարադրվածի քննությամբ պարզվում է, որ սկզբում վախմիստր Գերաշենկոյին, իսկ հետո նաև Ռոտմիստր Կոնովցևին Աբրահամովի տված հայտարարությունը հիմնավորապես ոչնչով չի հաստատվում: Ղարիբովի մոտ իրականացված խուզարկությամբ թեև գտնվել է պարկ՝ փամփուշտներով և երկու անանուն նամակներով, բայց Ղարիբովի կրպակի դիտարկման արձանագրությամբ, վկաներ Հարությունյանի, Նաբալդյանցի, Թանյանցի և գլխավորապես Զ[Չ]ուխարյանցի ցուցմունքներով և ձեռագրերի փորձաքննության արձանագրություններով կարելի է լիովին հաստատված համարել, որ այդ պարկը Ղարիբովի կրպակ է նետվել հենց իր՝ Աբրահամովի կամ նրա հանձնարարությամբ որևէ մեկի կողմից, իսկ անանուն նամակները գրված են նրա թելադրանքով և այսպիսով՝ Ղարիբովի վերաբերյալ Աբրահամովի գաղտնի ամբաստանությունը կեղծ է:

Իսկ ինչ վերաբերում է «Նադեժդա» ընկերության գործակալին, ապա նույնիսկ Աբրահամովն է ցուցմունք տվել նրա հանցավոր գործունեության մասին՝ միայն ենթադրության տեսքով, որն ինչպես վկայում է վախմիստր Գերաշենկոն, հիմնված է նրա անձնական կասկածների վրա, և ուրեմն՝ Պ. Արդարադատության Մինիստրը, համաձայն Կովկասի Քաղաքացիական մասի կառավարչի և Թիֆլիսի Դատատանական Պալատի Դատախազի եզրակացության, հնարավոր է համարում դադարեցնել ներկա գործի հետագա ընթացքը:

Ոստիկանության Դեպարտամենտը միանում է այս եզրակացությանը.-

Փոխընտանի փոխարեն՝ (ստորագրություն)

«5» սեպտեմբերի 1892 թվական

Գործավարի փոխարեն՝ (ստորագրություն)

ԱՐԽԻՎ

## Summary

### LEGEND OF THE UNDERGROUND OF ARF DASHNAKTSUTYUN A remarkable document on the revolutionary activity of Avetis Gharibyan (Padvali Vagho)

Gevorg S. Khudinyan

**Key words** – Padvali Vagho, underground, Alexandropol, Police Department, Ministry of Justice, military weapons, ammunition, shells, search, sack, investigation.

The publication provides a detailed report on the unsuccessful attempt of investigation by imperial police department and the Ministry of Justice toward a resident of Alexandropol (Gyumri) – Avetis Gharibyan in 1891–1892, we’ve also attached data taken from the Russian State Archive, with interpretations of the notes and explanations.

At the beginning of February 1891 as a result of denunciation by his own neighbor – Greek Alexander Abramov, Avetis Gharibyan faced a prosecution, as his booth (basement) was searched and some evidences of guilt were found (combat arms and ammunition), so it seemed there was no way to avoid punishment. But with the ingenuity that is inherent to the inhabitants of Gyumri, Avetis could take all the necessary steps that changed the course of the investigation. First he appeared before the court as a victim, who was slandered, and the prosecutor was presented as offender, whose statements were false. The fact that the witnesses were directed against the informer himself and the strong evidences were presented as a result of his machinations, and finally, notes that were stored at the informer’s and the testimony of the authors were again turned against the Greek, say that behind the legendary the figure was standing not only the organization of the ARF in Alexandropol, but also the aspiring citizens of Gyumri, who were always ready to defend their fellow countryman who was persecuted for “Sacred Cause”.

Though “The Report” compiled by the Ministry of Justice on September 5, 1892 has passed through all the punitive jurisdictions of tsarist Russia it states that under the pressure of the arguments and evidences of his friends the administrative authorities have been forced to discontinue the investigation.

ՀՀԿ համահայկական հանդես  
Է (ԺԳ) ցարի, թիվ 3 (51) հայկ-սեպտեմբեր, 2015



## Резюме

### ЛЕГЕНДА ДАШНАКСКОГО ПОДПОЛЬЯ Примечательный документ о революционной деятельности Аветиса Гарибяна (Падвали Ваго)

Геворк С. Худинян

**Ключевые слова** – Падвали Ваго, подполье, Александрополь, Департамент полиции, Министерство юстиции, боевое оружие, патроны, гильзы, обыск, мешок, расследование.

В публикации представлен детальный “Доклад” Министерства юстиции о неудачной попытке расследования Департаментом полиции подпольной деятельности члена АРФ Дашнакцутюн, жителя города Александрополь (Гюмри) Аветиса Гарибяна (революционный псевдоним – Падвали Ваго) в 1891–1892 годах. К публикации прилагаются и другие документы из Государственного архива Российской Федерации с интерпретациями и объяснениями автора.

В начале февраля 1891 года в результате доноса соседа – грека Александра Абрамова при обыске собственной лавки Аветис Гарибян предстал перед обвинениями, укрепленными вещественными доказательствами (части боевого оружия и патроны) и казалось, что у него нет никаких шансов избежать наказания. Но с находчивостью, которая присуща жителям Гюмри, Аветис смог предпринять все необходимые меры, чтобы изменить ход расследования. Во первых – он предстал перед судом в роли жертвы, которую оклеветали, а обвинитель был представлен в свете преступника, чьи заявления являются ложными. Показания свидетелей–армян были направлены против самого доносчика, а имеющиеся веские доказательства были представлены результатом его махинаций (свидетели уверяли будто мешок с патронами и частями боевого оружия был подброшен в лавку Гарибяна через окно). И, наконец, записки, конфискованные во время обыска, опять таки были обращены против грека (был найден автор этих записок, который утверждал, что написал под диктовкой Абрамова). Все это говорит о том, что за спиной Падвали Ваго стояла не только организация АРФ Дашнакцутюн в Александрополе, но и честолюбивые граждане Гюмри, которые не дали в обиду преследовавшемуся за “святое дело” соотечественнику.

“Доклад” составленный Министерством юстиции 5 сентября 1892 года, который прошел через все инстанции царской России, свидетельствует о том, что под давлением полученных аргументов и ответных доказательств царские карательные органы были вынуждены прекратить расследование.